ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՏԱՐՈՆ–ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՈՍՏԱՆ–ԱՂԹԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գ. Գ. ԿԵՐՍՄԷՆՋՅԱՆ

Ոստան քաղաքն ու Աղթամար կղզին մասնագիտական գրականության մեջ գիտվել են որպես Մանվել ճարտարապետի և Գագիկ թագավորի հրաշագործ ստեղծագործություններ։ Իրականում, երկու իրարամերձ բնակավայրերը կապված են եղել քաղաքաշինական բազմաթիվ գործոններով պայմանավորված անսամբլային փոխառնչությամբ։ Վերջինիս հստակ ընկալմանը խանգարում են Ոստանի կառուցապատման մասին եղած տեղեկությունների սակավությունը և Աղթամարի մասնակի ուսումնասիրվածությունը։

Ոստան քաղաքը պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի Ռշտունյաց գավառի կենտրոնն էր։ Գտնվել է Վանա լճի հարավարևելյան ափերին, Աղթամար կղզուն գիմահայաց Արտոս լեռան հյուսիսային փեշերին, Վան քաղաքից 27 կմ հարավ-արևմուտք[1]։

Ոստանը՝ պատմական Ասորեստանի Դուր Շարուկին անվանի քաղաքի մրցակից, ուրարտական Ռուսա Ա արքայի գլխավոր հենակետ, պարսպապատ, հզոր, գեղեցիկ ու մեծակառույց գահանիստն էր։ Մինչև VII դ. Ռշտունիների դաստակերտն էր։ VIII դ. Արծրունիները քաղաքն ազատագրում են արաբական լծից, իսկ IX դ. այն արդեն Հայաստանի կարևորագույն զորակետերից մեկն էր։ X դ. Ոստանը հիմնովին վերակառուցվում է և դառնում Արծրունի թագավորների աթոռանիստ ծաղկուն քաղաքը։ 1021 թ. հետո բյուզանդասելջուկյան ընդհարումների հետևանքով ասպատակվում է և անշքանում, մինչդեռ արաբ աշխարհագիր Մուսթաֆին (XIII դ.) այն նշում է որպես սելջուկյան բարգավաճ կենտրոններից մեկը։ 1424-ին Ոստանը հիմնահատակ կործանվում է Կարակոյունլուների առաջնորդ Իսկանդարի կողմից։ Ուշ միջնադարում քաղաքի ավերակների վրա մնում է աննշան մի բնակավայր[2]։

Ոստանի տեղանքը պատվանդանաձև է և անտառապատ։ Այն 1720 մ բարձր է ծովի մակերևույթից։ Քաղաքի հյուսիսարևելյան կողմը հրվանդան է, իսկ հյուսիս և հյուսիսարևմտյան ուղղություններով աստիճանաբար իջնում է դեպի լիճը։ Տարածքի ռելիեֆը բարդ է։ Քաղաքի հարավային մասի և Ար-

---

1 *Ոստան անունը ստուգաբանվում է պահլավերեն* Ostan=«գավառ», «տիրույթ» *կամ պարսկերեն* Ustan, Asitan=«շենք», «արքունի դուռ», «ապարանք», «ստացվածք» *բառերից։ Ոստան էր անվանվում Արշակունյաց տան աթոռանիստը։ Հայաստանի առաջին բաժանման շրջանում (387 թ.) Ոստան անունն էր կրում մայրաքաղաք Դվինը։ Ավելի ուշ Ոստան սկսեցին անվանվել նաև նահանգների, գավառների գլխավոր քաղաքները։ Ռշտունիքում Ոստան անունը տրվեց Ռշտունյաց տոհմի աթոռանիստին՝ «Ոստան Ռշտունեաց»-ին։*

Ոստան քաղաքը հիշատակվում է ուրարտական արձանագրություններում որպես Ուխշինիի։ Ասորեստանյան աղբյուրներում այն հանդիպում է Ուասու (Վասու), Ուախս (Վախս) և այլ անվանաձևերով։ Արաբական աղբյուրներում Ոստանը հիշատակվում է Ostan *կամ* Wastan։ *Հայ մատենագրության էջերում հանդիպում է «Ոստան Ռշտունեաց», «Ոստան ուան» և այլ անվանումներով (տե՛ս Հ. Հ ի ւ բ շ մ ա ն, Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 212, հմմտ. Մ. Ջ ո վ հ ա ն ն է ս ե ա ն, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 258—259, Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 8, Երևան, 1982, էջ 39։*

2 *Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1976, էջ 78, 240, 382, 570, հ. 4, Երևան, 1974, էջ 23, 33, 36, 57, 60, 279, 578։*

տոս լեռան միջև ձգվում է մի ձորակ, որ արևելյան կողմից վերջավորվում է շրջապատից մի քանի հարյուր մետրով բարձր Արտոսի գահավեժ լանջերով։ Այստեղ լեռնազանգվածը կտրուկ իջնում է և, մի անգամ ևս վեր խոյանալով, հրվանդանանման կախվում է երբեմնի ծովածոց նավահանգստի վրա։

Ըստ մատենագրական և մի շարք այլ աղբյուրների, Ոստան քաղաքը կազմված է եղել հյուսիսարևելյան նավահանգստից վերև գտնվող՝ իշխող դիրքով միջնաբերդից, դրանից հարավ-արևմուտք փռված բերդաքաղաքից և ավելի հարավ տարածվող թաղամասերից[3]*։*

Բերդաքաղաքի պարագիծը ունեցել է ձգված համաչափություն և հարավ-արևելքից հարավ-արևմուտք աստիճանաձև բացվել դեպի լիճը։ Նման դասավորությունը պայմանավորվել է Արտոս լեռան պաշտպանական նպաստավոր դիրքով և շենքերի՝ դեպի ծովակը բացվող տեսադաշտով։ Բնակավայրը պարագծող աշտարակավոր պարիսպները երկտակ են եղել և դեպի լիճը նայող ճակատներում՝ քանդակազարդ։ Բերդաքաղաքի ձևը և արվարձանային բնակխմբավորումների դասավորությունը ցույց են տալիս, որ քաղաքադարպասներից երկուսը գտնվել են արևելյան և արևմտյան պարսպապատերի միջին հատվածներում։

Բերդաքաղաքի առևտրահասարակական համալիրը, օրինաչափական կարգով, պետք է տարածվեր միջնաբերդի ստորոտից դեպի նավահանգիստն ու քաղաքադարպասները, այսինքն՝ արևմտյան կողմում գտնվող արվարձանները[4]*։*

1930 թ. Թավրիզի վանեցիների նախաձեռնությամբ Վենետիկում հրատարակված «Վասպուրական» երկում, Վանի ընդհանուր և քաղաքամիջի արխիվային հատակագծերից բացի, տրված է նաև Մ. Խերանյանի՝ 1927 թ. պատրաստած 1 : 115.000 մասշտաբով Շատախի շրջանի քարտեզը։ Այն ներկա ուսումնասիրության համար ևս կարևոր է հատկապես Ոստան քաղաքի պարսպապատերի ուրվագծի կապակցությամբ։ Առաջին հայացքից պատահական թվացող հատակաձևը իր տեղագրական բոլոր մանրամասնություններով համապատասխանում է վերևում բերված տեղագրական նյութերին։

Նշված քարտեզի և ուսումնասիրվող տարածքի 1943 թ. կատարված մանրամասն հանույթի[5] *ու տեղագրական այլ մատչելի նյութերի լույսի տակ Ոստանի ուսումնասիրությունը ցույց է տալիս բերդաքաղաքից դուրս X—XI դդ. շենքերի առկայությունը։ Դրանց տեղում, ուշ միջնադարում իրարից անջատ առաջացել են տարբերայնորեն կառուցապատված առանձին թաղամասեր*[6]*։ Վերջիններս Ոստանի արվարձանային մասի մնացորդներն են, որոնք*

---

[3] *Ոստանի քաղաքաշինության մասին տեղագրական և այլ համեմատական նյութերը տես Թ. Արծրունի, Պատմութիւն Տանն Արծրունեաց, Սանկտ Պետերբուրգ, 1887, էջ* 291—292, Насири Хусрау, Сафарнамэ, М-Л, 1933, с. 38. Jacut, Mu' ujam ul Buldan, Leipzig, 1924, p. 245. *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց՝ Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 134—135 և այլն, Է վլիյա Չելեբի, Երևան, 1967, էջ 266։ Ղ. Ինճիճեան, Նոր Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 158—159, Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1856, էջ 52, Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 264,* H. F. B. Lynch, Armenia, vol. II, London, 1901, pp. 123—124; *Ա-օ, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 54,* И. А. Орбели, Памятники армянского зодчества на острове Ахтамар (Избранные труды, т. I, М., 1868, 22), *նույնի*, Фольклор и быт Мокса, М.—Л., 1982, с. 25.

[4] Д. Кертменджян, Торгово-общественные центры средневековых городов Армении (IV—XIX вв.) (дисс. на соискание уч. степ. канд. арх., 1983, с. 96).

[5] Codex Kultur atlas, teil 9, Ankara, 1961.

[6] *Մ. Միրախորեան, Նկարագրական ուղևորութիւն ի հայաբնակ գաւառս արևելեան Տաճկաստանի, հ. Ա, Կ. Պոլիս, 1882, էջ 118։*

Լլնեյով տեղանքի անհավասար անտառապատ բնույթից, ունեցել են առանձնացված բնակխմբավորումներից կազմված տեղաբաշխում։

Ոստանի արվարձան-թաղամասերից միայն Սիվտկու վանքի (Սպիտակ վանք) թաղամասն էր գտնվում Նավահանգստի և միջնաբերդի արևելյան կողմում։ Առվամեջի կամ Գարոժի, Վերին, Ներքին, Մատմանց և այլ թաղամասերը բերդաքաղաքի հարավ-արևմուտքից տարածվում էին դեպի լճափի մերձակայքը։ Բերդաքաղաքի հյուսիսում տարածվում էր Հերիշատ կամ Հեշատ թաղամասը[7]։ Թաղամասերն ամբողջությամբ կապված էին ինչպես բերդաքաղաքի պարսպադարպասներին, նույնպես և մի փոքր հեռու ընկած Ահավանց կոչված «նավահանգիստ-ագարակի» կամ Աղթամարի վանքի «Դրսե տան» հետ։ Ոստան-Ահավանց ճանապարհից հարավ արվարձան-թաղամասերից առանձնանում էր Ռազմիրան կոչված արքունական հանգստի այգին[8]։

Աղթամար կղզին գտնվում է Վանա լճի հարավարևելյան ափերին՝ Ահավանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա։ Ծովի մակերևույթից բարձր է 1685 մ, իսկ լճի մակարդակից՝ մոտավորապես 60 մ սահմաններում։ Կղզու պարագիծը մոտավորապես սեղանաձև է՝ հիմքը 1650 մ, իսկ հյուսիս-արևմուտք—հարավ-արևելք ուղղվածություն ունեցող երկրաչափական բարձրությունը՝ 1500 մ։ Կղզու տարածքը 0,7 կմ² է[9]։ Աղթամարի բնատեղանքային, անվանման, պատմագրական, հնագիտական, քաղաքաշինական և արվեստաբանական ժառանգությունը հնարավորին սահմաններում ուսումնասիրվել է և թեմա դարձել բազմաթիվ ծավալուն աշխատությունների համար[10]։

Աղթամարի հնագիտական վաղագույն մնացորդները վերաբերում են նախաուրարտական ժամանակներին։ Մատենագրական աղբյուրները հավաստիացնում են, որ IV դ. կղզին ամրոց ապաստարան էր։ Այստեղ մինչև արաբական արշավանքները ամրաշինական և քաղաքացիական որոշ շինարարական գործունեություն են ծավալել Ռշտունիները։ Ավելի ուշ, Գագիկ Արծրունին իր մայրաքաղաքի հիմնադրման համար «խորաթափանց իմացությամբ» որոշում է Աղթամարը դարձնել համայն բնակչության ապաստարան[11]։ Ըստ Թովմա Արծրունու, Անանունի և այլ աղբյուրների[12], Աղթամար կղզու կառուցապատման քաղաքաշինական տարրերն էին «Զօրայ» ամրոցը, պալատական համալիրը, գլխավոր եկեղեցին, նավահանգիստը, առևտրական, հասարակական և տասնյակի հասնող պաշտամունքային զանազան շենքերը, թեք և հարթ տեղանքին հարմարեցված բնակելի թաղամասերը, արքունական պահեստները։ Այս բոլորը շաղկապվում էին կանաչով զոտևորված փողոցների համակարգով[13]։

---

7 Արձագանք, 1885, № 6, էջ 87։

8 Մ. Միրախորեան, նշվ. աշխ., էջ 119։

9 Documents of Armenian architecture.., p. 99.

10 Աշխատություններից կարևորագույններն են՝ M. S. Ipşiroglu, Die Kirche von Acht'amer, Berlin und Meinz, 1963; S. Der-Nersesian, Aght'amer church of the Holy Cross, Cambridge, –Mass., 1965. И. А. Орбели, նշվ. աշխ., Documents of Armenian architecture, vol. 8, „Aght'amar"; Milane, 1974; Ս. Մնացականյան, Աղթամար, Երևան, 1982, նույնի՝ Aght'amar, Erebuni press, 1985.

11 Թ. Արծրունի, նշվ. աշխ., էջ 292—296։

12 Աղթամարի կառուցապատման կապակցությամբ ուսումնասիրվել են հետևյալ հեղինակների հաղորդումները՝ Թ. Արծրունի, նշվ. աշխ., էջ 292—296, Էվլիյա Չելեբի, նշվ. աշխ., էջ 256—257, Ղ. Ինճիճեան, նշվ. աշխ., էջ 152—153, Մ. Միրախորեան, նշվ. աշխ., էջ 109, H. B. F. Lynch, նշվ. աշխ., էջ 156, W. Bachmann. Kirchen und Moscheen in Armenier und Kurdistan, Leipzig, 1913, p. 92—98. И. А. Орбели, նշվ. աշխ., էջ 29, 31—35, Մ. Յովհաննէսեան, նշվ. աշխ., 253—257, Ա. Կ. Զարյան, Ակնարկներ միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության, Երևան, 1985, էջ 126։

13 Թ. Արծրունի, նշվ. աշխ., էջ 294—295։

Ամրոցը զինամթերանոցի և այլ պահեստների հետ տեղադրված էր վաղ միջնադարյան՝ Ռշտունյաց ամրոցի տեղում, կղզու արևմտյան ժայռազանգվածի դագաթին։ Ելնելով ամրոցները բովանդակող շենքերի տիպաբանական կազմից, կարծիք կա, որ Աղթամարի ամրոցը տեղադրված է եղել պալատական համալիրի և ս. Խաչ տաճարի հարևանությամբ, կղզու արևելյան կողմում[14]։ Այս ենթադրությունը հակասում է Թ. Արծրունու հաղորդմանը, ըստ որի ամրոցը կղզու արևմտյան բարձունքների վրա էր, իսկ կրոնապալատական համալիրը՝ արևելյան կողմում[15]։ Այսինքն, կրոնապալատական համալիրն իր օրինաչափ տեղում չէ։ Ուստի Աղթամարի կառուցապատման հորինվածքում առկա է ոչ սովորական լուծում՝ պայմանավորված Ոստանի քաղաքաշինական անսամբլային նորովի մտահղացմամբ։

Աղթամարի ամրոցը բերդաքաղաքի կրկնակի պարսպապատերի, բուրդերի և աշտարակների հետ կազմում էր մեկ ընդհանուր պաշտպանական համակարգ, որը հսկողության տակ էր վերցնում կղզու ողջ տարածքը։

Աղթամարի առևտրահասարակական համալիրը օրինաչափորեն պետք է տեղադրվեր բերդատակին, բնակելի թաղամասերի և առափնյա քաղաքներում ապրանքամատակարարման գլխավոր աղբյուր հանդիսացող նավահանգստի միջև։ Տվյալ դեպքում այն զգալիորեն հեռացվել էր ամրոցից և գործարարական պահանջներով տեղադրվել նավահանգստի, կրոնապալատական համալիրի և բնակելի թաղամասերի միջև։ Փաստորեն կղզու կառուցապատման քաղաքաշինական կազմում վերացել է միջնադարյան ավատատիրական կազմավորման օրինաչափությամբ ստեղծված ամրոց-առևտրահասարակական համալիր հարակցումը։ Այստեղ այն գործարարական սկզբունքով տեղադրվել է Ոստանի նկատմամբ ամենամատչելի մասում։

Առանձնապես ուշագրավ է Աղթամարի հարավարևելյան երկարությամբ ձգվող նավահանգստի լուծումը, որ հմտությամբ նկարագրում է Անանուն պատմիչը։ «Հրաման տուեալ,— գրում է նա,— բազում արուեստաւորաց և անթիւ մարդկան ղհատեալ վէմս ծանունս և դժուարակիրս հոսել ընկենուլ յատակս ծովուն անհնարին խորութեանն և ժամանակաւ ինչ այսպէս ջան յանձին կալեալ մեծի արքային՝ և յանկարծակի եկն եկաց կանգնեցաւ քարայատակն ամբարտակ կանգունս հինգ և վերայ բարձրացեալ մկանաց ծովուն, որ մտացն աչօք իբրև ի ցամաքի շարայարեալ տողադրէ զհաստակառոյցն վիմաց կարգս. յորոյ վերայ լար եղեալ ձգէ զպարիսպն շուրջանակի իբր ձիարշաւանօք հինգ և պարիսպն է հրաշակերտ, ահեղակերպ, բարձրաբերձ լայնանիստ բրգամբք և բարձրացեալ աշտարակօք զարդարեալ, անկիւնաւոր խորանանման տախտակաձև յինքեան ունելով գահոյք զբօսանաց, յորում հանդերձ որդւովք և ազատակոյտ զօրօք միշտ ուրախանայր արքայ։ Իսկ և զգլուխս պարսպին ածեալ ի կիրճս դժուարամածս քարանձաւին՝ ի համբոյրս միմեանց մերձեցուցանէ. ի շրթունս խորայատակ հիմանց ծովուն դնէ դրունս ահավորատես, հաստահեղոյսս, բևեռապինդս. որով և զմասն ինչ ծովուն ի կղզին կոյս հատանելով՝ հրաշալիս իմն ներգործեաց, բազում նաւաց յօրինեալ խաղաղ և անքոյթ նաւահանգիստ...»[16]։

Փաստորեն նավահանգիստը կառուցվել էր 2,6 մ բարձրություն ունեցող պատվարի ներսում. այն օվալաձև էր (լայնությամբ՝ 5 ասպարեզ (554 մ), իսկ ընդհանուր մակերեսը՝ մոտավոր հաշվումներով 4 հեկտար։ Ինչպես բերդաքաղաքը, նավահանգիստը նույնպես եզերված էր երկտակ պարիսպներով։ Հաստահեղույս պատերը, երկարելով արևմտյան և արևելյան կողմերից, պաշտպանական մի ընդհանուր համակարգ էին դարձնում ծովածոցը կղզու մյուս մասերի հետ։ Պարսպահամակարգը գեղագիտական սկզբունքներով բովանդակում էր պարագծով մեկ դասավորված դիտահաթակներ, որոնք

---

14 Ս տ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Աղթամար, Երևան, 1983, էջ 24։

15 Թ. Ա ր ծ ր ո ւ ն ի, նշվ. աշխ., էջ 294, 296։

16 Նույն տեղում։

կենտրոնական մասում բացվում էին դեպի գլխավոր քաղաքադարպասի տարածքը[17]։

Ոստան քաղաքի և Աղթամար կղզու կառուցապատման կանոնավոր կամ ազատ սկզբունքը դժվար է որոշել առանց հնագիտական պեղումների։ Սական երկու բնակավայրերի միասնական քաղաքաշինական համակարգ, մեկ ծավալատարածական անսամբլ կազմելը միանգամայն ընկալելի էր։

Պատմագիտական նյութերը թույլ են տալիս պնդելու, որ Գագիկ Արծրունին ձգտում էր անկախ թագավորության[18]։ Այդ կապակցությամբ էլ առաջնահերթ խնդիր էր ապահով և վայելուչ մայրաքաղաք հիմնադրելը։

Դիվանագիտական տեսանկյունից Վասպուրականի սահմանային տարածքներում ամրացած սելջուկյան ընտանիքների առկայությունը թելադրում էր Արծրունյաց տիրույթի Վան, Հադամակերտ, Ոստան, Դատվան կենտրոններից որպես մայրաքաղաք ընտրել սահմանային գոտիներից ամենահեռավոր և միջազգային առևտրական մայրուղուն ամենամոտ քաղաքը՝ Ոստանը։

Պաշտպանական և անառիկության տեսակետից Վանա լճի նկատմամբ Ոստանի ունեցած բաց դիրքը, Տարոնի քաղաքական անկայուն իրավիճակը ստիպում են տարածքը պաշտպանել նաև լճի կողմից։ Տվյալ ռազմավարական մտահոգությունը քաղաքաշինորեն լուծվում է միաշունչ, հմուտ և չափազանց տրամաբանական մոտեցմամբ՝ Աղթամար կղզին կառուցապատել որպես Ոստանի առափնյա ամրոց և «ծանուցեալ զնա ապաստան լինել աշխարհի ի հինից թշնամեաց»[19]։

Աղթամար կղզին Անանուն Արծրունու մի շարք որակումների [illegible] անվանվում է նաև թագավորավայել «քաղաք»։ Այս վկայությունը գուցե կարծել է տալիս, թե Աղթամարը Գագիկ Արծրունու մայրաքաղաքն էր։ Իրականում Աղթամարը մայրաքաղաք չի եղել, այլ նրա համար այդ բնորոշումը գալիս է ընդունված այն սկզբունքից, որ «քաղաք» էին անվանվում կառուցապատման որոշ տարրեր ունեցող պարսպապատ բնակավայրերը[20]։ Տվյալ դեպքում, Աղթամարի տարածքային ցուցանիշները, հատկապես միջնաբերդի տարածքի հարաբերությունը քաղաքի ընդհանուր մակերեսին, համեմատած իր ժամանակաշրջանի հայկական մյուս քաղաքների հետ (Անի, Կարին, Կարս, Այաս, Անազարբա, Սիս, Լոռի, Խլաթ, Վան, Սեբաստիա, Երզնկա և այլն)[21], անբավարար է, մանավանդ, որ կղզին չուներ հեռանկարային ըն-

---

17 Հմմ. И. А. Орбели, նշվ. աշխ., էջ 28—30։

18 Documents of Armenian' architecture, p. 8–9.

19 Թ. Արծրունի, նշվ. աշխ., էջ 293։

20 Գ. Տաթևացի, Գիրք Ձմեռան, Կ. Պոլիս, 1886, էջ 424—427։

21 Հայկական բնակավայրերի պատմաքաղաքաշինական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք դասակարգելի են ըստ շարունակականության, տիպերի և զբաղեցրած տարածության ցուցանիշների։

Շարունակականության առումով հայկական քաղաքները կարելի է խմբավորել անընդհատ, պարբերական և միաշրջան տևողականության։ Պատմական Հայաստանում հանդիպում են բնակավայրերի ներքոհիշյալ տիպերը՝ ագարակներ կամ ուշ միջնադարյան մեզրաներ, գյուղեր կամ ավաններ, բերդեր, ամրոց-դղյակներ, ամրոց-բնակավայրեր, բերդավաններ կամ քաղաքագյուղեր և քաղաքներ։

Բերդավանների ամրոցները նախատեսվում էին տեղական պաշտպանության համար, սովորաբար ունենում էին 1—2 հա մակերես և տեղաբաշխվում 20—40 հա անպարիսպ բնակավայրի ամենաբարձր մասում։ Այդպիսիք են՝ Շատախը, Մոկսը, Խիզանը, Արգինան, Ապարանքը, Արճակը, Հյուսեյնիկը, Մեղրեն և այլն։

Ամրոց-բնակավայրերը կամ բերդավանները երկրի ռեգիոնալ ամրաշինական ցանցի տարրերից էին, որոնցով չափազանց հարուստ էր Կիլիկյան Հայաստանը։ Կենտրոնական Հայաստանում դրանց անվանում էին նաև ձորապահակներ (Հասանկլա, Բաբերդ, Շուշի, Լոռիբերդ, Խարբերդ, Նոշապաբերդ, Բջնի, Ամբերդ, Ծղուկ, Սաղասբերդ և այլն)։ Դրանց լավագույն օրինակներից էր Աղթամարը։

դարձակման հնարավորություն։ Ելնելով Մանվել Ճարտարապետին վերագրվող գործերից, անվիճելի, որ նման հմուտ քաղաքաշինարարին անպայման ըմբռնելի պետք է լիներ տվյալ իրադրությունը, և հենց այդ պատճառով էլ նա Աղթամարը դասում է Ոստանի հետ քաղաքաշինական մի ընդհանուր համակարգում։

Երկու բնակավայրերի մեկ ընդհանուր քաղաքաշինական համակարգային լուծումը ժառանգորդական տարր էր Վանա լճի ավազանի քաղաքաշինության համար։ Այդպիսի հորինվածքը հավանաբար թելադրվում էր լճի մակարդակի անկայուն վիճակով։ Պետք է նշել, որ Վանա լճի ավազանի քաղաքները մեծ մասամբ Վանի թագավորության («ուրարտական») շրջանի հիմնադրումներ են և ակնարկվող քաղաքաշինական լուծման արմատները պետք է որոնել հենց այդ ժամանակներում։ Վերջինների սոսկ զուգահեռներն են ծովային Կիլիկիայի՝ Այաս, Կոռիկոս, Անեմուռիոն, Ադալիա, Սիդե և այլ քաղաքները[22]։ Ոստան-Աղթամարը վերևում նշված բնակավայրերի հետ ունենալով ռազմագիտական և կառուցապատման որոշ ընդհանրություններ, քաղաքաշինական հորինվածքի գաղափարական և անսամբլային լուծման առանձնահատկություններով մնաց անկրկնելի։ Զուգահեռներ անցկացնենք կղզու տեղանքին Ճանվող հելլենիստական Միլեթոս քաղաքի հատակագծային կազմի հետ[23]։ Երկու բնակավայրերի հատակագծային հորինվածքները համընկնում են։ Դրանք հիմնականում զարտուղվում են ամրոցների հակադիր մասերում։ Միլեթոսի ագորան կորագծային կառուցապատմամբ տարածվում էր երկու ծովախորշերի միջև՝ արտաքին բոլոր կողմերից շրջապատված բնակելի թաղամասերով։ Փաստորեն Հիպոտամոս ճարտարապետի խնդիրն է եղել կենտրոնի հասարակական և առևտրական գոտիների՝ հարակցման ու փոխմեկուսացման, մատչելիության, ապրանքամատակարարման և այլ գործոնների կողքին քաղաքի ընդհանուր համակարգում ընդգծել հենց ինքը բնակավայրը՝ բնակելի թաղամասերը։ Աղթամարի լուծման մեջ Մանվելի ստեղծագործական մոտեցումը հակառակն էր՝ կառուցապատման ընդհանուր համակարգում ընդգծել նորաստեղծ մայրաքաղաքի համար գաղափարական նշանակություն ունեցող կրոնապալատական համալիրը։ Ինչպես պատմիչն է վկայում. «...Իսկ և նիստ փառաց տաճարին յամենայն կողմանց գաւառին, ի մէջ քաղաքին երևի իբրև զմեծ մի բլուր ոչինչ նուազեալ բարձրութեամբ քան զբարանձաւ ծայր կղզոյն»[24]։ Ուրեմն եթե Միլեթոսի ագորայի համալիրը վերջանում է թերակղզու կենտրոնում, Աղթամարում տեղադրվելով կղզու հարավարևելյան վերջավորության վրա, ամբողջանում էր Ոստանի կառուցապատումով։

Ուսումնասիրվող համալիրի երկու մասերի գործարարական կապն իրականացնում էին նավահանգիստները. դրանք այսօր սուզված են և միայն

Քաղաքային տարածքների փոխառնչության կապակցությամբ պետք է նշել, որ ամրոց-բնակավայրերի, ամրոցային մասերի մակերեսները համահավասար էին քաղաքային միջնաբերդին՝ 3—7 հա, իսկ բերդաքաղաքային ենթամասերը համեմատաբար փոքր էին և տատանվում էին ընդամենը 50—70 հա մակերեսների միջև։ Վերջին ցուցանիշը քաղաքներում հանդիպում է 80—120 հա-ի միջև։ Որոշ քաղաքներում բերդաքաղաքի համեմատաբար փոքր մակերեսը հավասարակշռվում էր բնակավայրերի ռեգիոնալ տեղաբաշխմամբ՝ շրջակա տարածքի բնակավայրերի արբանյակային իրարամերժ խտացված դասավորությամբ (Խարբերդ, Վան, Եղեգ, Մանազկերտ) կամ վաղգույն արվարձանային թաղամասերի առկայությամբ (Դարույնք-Բայազետ, Կարս, Անի...)։

22 Նշվածների մասին մանրամասն տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան Վենետիկ, 1885, H. Hellenkemper, Burgen der Kreuzritterzeit in der Grafschaft Edessa und im Komigreich Kleinarmenien, Bonn, 1976; T. S. R. Boase, The Cilician kingdom of Armenia, Edinburgh, London, 1978; R. Edwards, The fortification of Armenian Cilicia, Washington D. C., 1986 etc.

23 Քաղաքի մասին տե՛ս Всеобщая история архитектуры т. 2, М., 1973, с. 144.

24 Թ. Արծրունի, նշվ. աշխ., էջ 296։

պեղումները կարող են ճշտել դրանց պարագծային ձևը։ Այնուամենայնիվ, նավահանգիստների մասին որոշ պատկերացում կարող է տալ Կիլիկյան Սոլի Պոմպեոպոլիսի նույնատիպ քաղաքամասը[25], նկատի առնելով, որ այն չափազանց նման է Թ. Արծրունու նկարագրածին։

Տեղադրական ռիրքի տեսանկյունից Աղթամարի նավահանգիստը նույնական կարելի է դիտել Աթենք քաղաքից 6 կմ հեռավորության վրա գտնվող Պիրեյ նավահանգստի դասավորությանը[26], մի տարբերությամբ, որ հույն ճարտարապետ Կալիկրատեսը Պիրեյ-Աթենք քաղաքաշինական առանցքի գաղափարական խորհրդանիշը՝ Աթենքի, Ակրոպոլիսը, տեղադրում է հենց բերդաքաղաքում։ Տվյալ դեպքում Մանվել ճարտարապետն իդեալականացնում է դա։ Նա դուրս է բերում գլխավոր պալատական համալիրը բերդաքաղաքից և քանդակային կերտվածքով, շենքերի հերոսական ու ցցուն հարթաքանդակների բնական և մանր չափումներով դնում քաղաքի նավահանգստի հեռանկարային խորքում, որպես Ոստան-Աղթամար քաղաքաշինական համակարգի տեսանելիության կենտրոն։

Ոստան-Աղթամար քաղաքաշինական հորինվածքն իր մտահղացմամբ և լուծումներով նույնքան պերճաշուք է, որքան Աղթամարի տաճարը ճարտարապետության համար։ Այն հարազատորեն արտացոլում է հայ մշակույթի զարգացման X—XI դդ. հետևողական փուլը և համարվում նրա գլուխգործոցներից մեկը։

Հայ քաղաքաշինության անտիկ նվաճումների՝ Արտաշատի, Տիգրանակերտի, Արտամետի կառուցապատման հիմնական տարրերի (ամրոց, պալատ, մեհյան, գանձատուն, ագորա, թաղամասեր) հորինվածքային սկզբունքը, շարունակվելով Դվինի հատակագծային բաղկացուցիչ մասերի (միջնաբերդ, կաթողիկոսական պալատ, սբ. Գրիգոր եկեղեցի, Կենտրոնական թաղամաս և այլն) կառուցվածքում, ստեղծագործաբար կրկնվեց զարգացած միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքների նույն համալիրների տարրերի (Կիլիկյան Սիսի՝ Լևոնի բերդ, Լևոնի դարպաս, պարսպապատ կրոնական համալիր և շահաստան, Անիի՝ միջնաբերդ, գլխավոր հրապարակ, Մայր տաճար, Բուն փողոց և առավել ևս սույն ուսումնասիրության Ոստան-Աղթամարի համապատասխան մասեր) հորինվածքներում։

Ոստան-Աղթամարի աստիճանաձև դասավորված բնակելի թաղամասերով, ամրաշինական համակարգով, կրոնապալատական համալիրով և հանդիպակաց նավահանգիստներով ներկայացվող անսամբլը հայ միջնադարյան քաղաքաշինության մի նոր վերելք էր, որ արտացոլել է տարածքի հին ժառանգության վերակոչումը ժամանակի քաղաքաշինական արվեստում։

Միայն վերը բերված դրույթներով կարելի է հասկանալ Անանուն Արծրունու հետևյալ արտահայտությունը. (Դագիկ Արծրունին—Դ. Կ.) «բարձրագոյնս հրաշակերտեաց քան զԱղէքսանդրին ի Մակեդովն քաղաքի, և որպէս ինձ թուի՝ զանցոյց զարմանալեօք զՇամիրամեան փորուածոյ սենեկօքն և զամբարտակաւ գետոյն որ առ ստորոտով լեռինն Վարագայ (իմա՝ կոր արհեստական լիճը—Դ. Կ.), ղի նորայն գոնեայ ի վրայ ցամաքի, իսկ սա (իմա՝ Աղթամարն ու նրա նավահանգիստը—Դ. Կ.) է մեծ խորոց ծովում արուեստակեալ՝ հարստահարէ զամենայն միտս և զգործս իմաստնոցն առ է քան զինքն եղելոց»[27]։

---

25 Հատակագիծը տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, Երևան, 1893, էջ 349։

26 Հատակագիծը տե՛ս А. В. Бунин, Градостроительство рабовладельческого строя, т. I, М., 1979, с. 67.

27 Թ. Արծրունի, նշվ. աշխ., էջ 294։

ГРАДОСТРОИТЕЛЬНАЯ КОМПОЗИЦИЯ ВОСТАН-АХТАМАР СРЕДНЕВЕКОВОГО ТАРОНА-ВАСПУРАКАНА В ИСТОРИЧЕСКОЙ АРМЕНИИ

Д. Г. КЕРТМЕНДЖЯН

Резюме

Город Востан и остров Ахтамар, расположенные друг против друга на расстоянии 6—7 км, составляли единую противостоящую пространственную систему. Ступенчато расположенный город Востан со своим замком и городом-крепостью открывался непосредственно к дворцово-храмовому ансамблю Ахтамарского комплекса, удерживая в поле зрения весь остров в целом.

Замысел и решение основанной архитектором Мануелом и царем Гагиком Арцруни новой столицы диктовались политическими, стратегическими, идеологическими, экономическими соображениями, а также традиционными и закономерными градостроительными факторами. Востан-Ахтамар был для градостроительства явлением не менее значительным, чем Ахтамарский храм для архитектуры. Продолжая античные традиции, он достиг высокого уровня градостроительного искусства как по форме, так и по содержанию.